
**ՀԱՅԵՐԵՆ ՏԵՔՍՏԸ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԵՋ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Գ.

Լեզուն զգայուն է հասարակական յուրաքանչյուր նոր երևույթի հանդեպ, որն ի հայտ է գալիս: Այդ երևույթը կարող է շատ կարճ ապրել մարդկության կյանքում, սպառել ինքն իրեն և այլևս գոյություն չունենալ, սակայն հետքը լեզվում երկար է մնում: Նոր երևույթի բերած փոփոխությունը լեզվում թերևս առաջին հերթին շարժն է բառապաշարում, որ շղթայաբար շարունակվում է լեզվի մյուս մակարդակների մեջ: Փաստորեն անվանումը, այդ անվան կիրառությունը դառնում են լեզվի տարր ու այդպիսով խախտում կամ ձևափոխություններ անում լեզվում: Ամեն մի երևույթ ներառում է այլ երևույթներ, որոնցով կարելի է կանխատեսել դրա ապագան, ուրեմն, նայած թե ինչպիսին է տվյալ լեզվի համացանցային արտահայտությունը, կարելի է պատկերացնել այդ լեզվի ապագան¹: Այլ հարց է՝ համարո՞ւմ ենք արդյոք տվյալ լեզվի համացանցային դրսևորումները լեզվի մաս:

Մեր օրերում արդեն ահռելի դեր ու նշանակություն ունեցող համացանց բերեց կենցաղի որոշ փոփոխություններ, և եթե տեխնիկական հեղաշրջման արդյունքը կենցաղում անմիջապես երևաց, ապա այդ նույն հեղաշրջման արդյունքները լեզվում գուցե դեռ երկար չերևային, արտահայտվեին լեզվում ընդամենը մի քանի կամ մի քանի տասնյակ բառերի մուտքով զբաղմունքային և տերմինաբանական բառապաշար, եթե համատարած չդառնար էլեկտրոնային հաղորդակցությունը: Հաղորդակցման այս տեսակի հետքերը լեզվում առավել ակնհայտ են, քան հաղորդակցման մյուս միջոցներինն ու ձևերինը: Օրինակ, հեռահաղորդակցության գլխավոր ու հանրահայտ միջոց հեռախոսի բերած լեզվական նորություններից կարող ենք թերևս մեկ բառ մատնացույց անել՝ «ալո», որով հեռախոսային կապ է սկսվում, բայց նույնիսկ այդ բառը տարբեր լեզուներում միանգամայն փոխարինելի է մեկ ուրիշով՝ «լսում եմ», «այո» և այլն: Սակայն էլեկտրոնային հաղորդակցության բերած փոփոխությունը մեկ բառ կամ երեք արտահայտություն չէ. էլեկտրոնային հաղորդակցությունը տակնուվրա է անում յուրաքանչյուր լեզու՝ սկսած հնչյունաբանությունից մինչև լեզվական բարձրագույն մակարդակներ, և կան սարսափելի կանխատեսումներ. «Նյարդերն ու ապրումները գլոբալացնող էլեկտրական տեխնոլոգիան լեզվի համար կունենա ահռելի հետևանքներ»²: Պնդումը, որ էլեկտրոնային հաղորդակցման տեքստերում արտացոլվում են հասարակության անկումները՝ հետաքրքրության նվազումը լավ գրականության

¹ Տե՛ս **Уайтхед А.** Избранные работы по философии, М., 1990, с. 238.

² Տե՛ս **Маклюэн М.** Понимание Медиа: внешние расширения человека, М., 2003, с. 42.

հանդեպ, էժանագին ամսագրերի տարածվածությունը և այլն՝, այնքան էլ ճիշտ չէ, ավելի ճիշտ՝ չափազանց կտրուկ է, քանի որ կիրթ ու գրագետ անձնավորությունը նույնպես ստիպված է շրջանցել լեզվական շատ նորմեր. համացանցը բանականություն է, բայց, այնուամենայնիվ, արհեստական, որի հնարավորությունները սահմանափակ են կենդանի լեզուն համապատասխանաբար ներկայացնելու հարցում: Լեզվի աղավաղված ձևերի պատճառներն այս դեպքում ավելի խորն են:

Նշված տեսակի հաղորդակցության հետևանքով լեզվում առաջացող փոփոխությունը անվանենք լեզվական կաթված: Դա մի վիճակ է, որի նախանշաններից սովորաբար դժվար է հստակ եզրակացություն անել, սակայն դրանք չնկատելու կամ անտեսելու դեպքում, մեղմ ասած, անցանկալի հետևանքները ավելի քան հավանական են: Ու այդ հետևանքների ծանրությունը կախված է կենսաբանորեն՝ օրգանիզմի, իսկ տվյալ դեպքում՝ լեզվի ամրությունից, սակայն յուրաքանչյուր օրգանիզմ ի վերջո կդադարի ինքնուրույն պայքարել, եթե այլ միջոցներ չձեռնարկվեն դրությունը փրկելու ուրեմն տվյալ լեզվի ճակատագիրը այն կրողի ձեռքում է:

Լեզուն հաղորդակցման միջոց է ամեն դեպքում, ու սա նշանակում է, որ այն ամեն կերպ կարելի է ձկել մարդկանց միջև կամուրջներ ստեղծելու համար: Ընդունելի կարելի էր համարել լեզվի՝ կամուրջ դառնալու համար ստացված յուրաքանչյուր ձևում, եթե չլինեք լեզվի վերաբերյալ հետևյալ ճշմարտությունը. լեզուն մտքի արտահայտությունն է, որ ազդում է մտքի վրա: Այսինքն՝ թեկուզ լեզվի առաջնահերթ դերն իրականացնելու համար կամայական ձևումները անթույլատրելի են, եթե մարդը չի ցանկանում կորցնել պատմության ընթացքում մարդկության գերագույն նվաճումները՝ սկսած անձնական ինքնակարգավորումից մինչև քաղաքավարության կանոնների ամբողջություն, գրված օրենսդրությունից մինչև բարոյական չգրված օրենքներ, որովհետև այս բոլորը միավորվում ու արտահայտվում են լեզվով՝ ցանկացած իմաստով: Մեր լեզուն՝ հայերենը, եթե չի եղել, ապա դարձել է գերզգայուն օտար տարրերի հանդեպ, և գուցե պատճառը զուտ լեզվական կամ լեզվաբանական չէ: Մեր լեզվի ներկայիս վիճակը համացանցում, էլեկտրոնային հաղորդակցման դեպքում մասնավորապես, կարող ենք համեմատել դեռևս ձևավորման փուլ ապրող, առանձնապես սեփական ոչինչ չունեցող լեզվի հետ: Ասվածը թերևս կոպիտ է, սակայն ճշմարիտ: Էլեկտրոնային հաղորդակցման հայերենը այնքան տարբեր է նախանձելի կատարելության այբուբեն, արտահայտչական հրաշալի հնարավորություններ ու պատմություն ունեցող հայերենից, որ դժվարանում ենք նույնիսկ մեր օրերի ամենատարածված ու տարածվող հաղորդակցման դաշտում գործածվող լեզուն նույնպես հայերեն անվանել: Նպատակահարմար է առանձնացնել այն՝ անվանելով «անկանոն հայերեն», քանի որ գործ ունենք իսկապես մի լեզվի հետ, որտեղ ամենաթողություն է տիրում: Հարկ է փաստել

³ Տե՛ս **Сидорова М.** Засоряют ли СМС-сообщения русский язык? или На зеркало неча пенять.../
<http://marinadoma.narod.ru/inet/sms.html>

այն տհաճ իրողությունը, որ էլեկտրոնային հաղորդակցման հայերեն տեքստը պարզապես ինչ-որ ձևերի մեջ խցկած բովանդակություն է⁴։ Սակայն մի կողմ թողնենք լեզվական արտահայտչամիջոցների, ձևերի ու դրանց մեջ դրված բովանդակությունների ներդաշնակության հարցը։ Անդրադառնանք մասնավորապես ձևերին՝ առանձնացնելով շարահյուսական (հիմնականում՝ կետադրություն, նախադասությունների կապակցություն՝ հարաբերություններ, շարահարություն, շարադասություն), ձևաբանական (այս կամ այն խոսքի մասի դրսևորման ձևերը), բառագիտական (մասնավորապես բառային կազմի համալրում), հնչյունաբանական (ուղղագրություն, գրաբանություն) ակնհայտ յուրօրինակությունները։

Այսպես, տեսնում ենք նախադասությունների քերականական հարաբերությունների խախտումներ, օրինակ՝ իմաստային, երբ մեկ զրույցի ընթացքում զրուցակցի հաղորդագրությունը տեղ է հասնում ավելի ուշ, քան պետք է հասներ, և մյուս զրուցակիցը իր ասելիքն արդեն շարադրել է ու հարցը ստանալուն պես դրա պատասխանը կցում է իր ասելիքին. առաջին հայացքից կդիտվի որպես շարունակություն, մինչդեռ բովանդակությամբ դրան չի շարունակում։

-Barev!	17:01
*Vaaay barev! Lava ekar ban ei aselu.	17:03
-Barev!	17:03
*Nor eji hascen asem?	17:04
-Dzeronq ekan???	17:05
*Gri www.postcardav.net	17:07
-Aasum en lav el qaxaq a.	17:07
*Tes bacum a?	17:08
-En angam el Armikn asec uzum a inqn el gna.	17:09
*Yes porzel em chi exel bayc	17:09
-Asum a prcni kgna. Spasi hesa kanem.	17:10
*Mi hat vraz nayi inz el asa .	17:12
-Lav gnaci es internetic. Hajox!!!!	17:14

Կան այլաձևություններ հատկապես պատճառահետևանքային հարաբերության, երբ պատճառ արտահայտող նախադասության և հետևանք ցույց տվող նախադասության միջև կրկին անհարթություն է առաջանում կա՛մ զրուցակցի անժամանակ հաղորդագրության, կա՛մ ոչ լեզվական ինչ-որ նշանի գործածման հետևանքով, օրինակ՝

---Du cheir asel indz.	20:54
***Bayc harcneir.	20:54
---Ay dra hamar chharcni.	20:54

⁴ Բնորոշ է նաև «ճանկերում փակված բառ» արտահայտությունը, որ տեսնում ենք թղթի գրից ստացված առաջին տպավորությունը ներկայացնելիս (Маклюэн М. նշվ. աշխ., էջ 43)։

կամ՝

Yes el mtaceci, vor djyar tex hasni   tenc chuxarkeci !!

, ինչպես նաև շա-
րահարության արտառոց արտահայտություններ, երբ նախադասու-
թյունների միջև դրվում է, օրինակ, այնպիսի հղում, որը ձևային առումով
անմիջապես իզուր է նախադասությունների և՛ տրամաբանական, և՛
քերականական կապերը, չնայած դրված է որպես մտքի լրացում.

Gtel em arden <http://www.youtube.com/watch?v=1KcBiZ4EA-I> , Hima lsum em!

Էլեկտրոնային հաղորդակցման տեքստերի կառուցման այս ձևը
շատ տարածված և կարծես թե կայունացած է. մնում է երկու
ճանապարհ՝ կա՛մ նախադասության այդ տարօրինակ անդամները
այդպես էլ թողնել լեզվից դուրս, կա՛մ էլ ընդունել դրանք որպես
նախադասության նոր անդամ, որ, սակայն, կարդացվում է ոչ սովո-
րական տեքստի պես, կամ դրա կրած տեղեկատվությունը ակնառու և
բառի բուն առումով կարդալու ենթակա չէ. այն ընդամենը գուշակելի է:

Համատարած հանդիպում են ձևայնորեն զեղչված տարբեր ան-
դամներ՝ մտածված կամ տեխնիկական խնդրի հետևանքով, որ կարելի է
նկատել ընդհանրապես բոլոր էլեկտրոնային հաղորդակցման
տեքստերում, օրինակ՝

---Barev!

*** 

Կամ՝

---De 4ka....

*** Նայի en myus ejerum.

---Myus ejerum el chkar. Nayel em.

Խեղաթյուրված է հայերենի կետադրությունը: Կետադրական
նշանները գործածությունից դուրս են, ինչպես՝

Lilitin tesa aseci vaay kez eink spasum Aseci yes u du kgnank vor irenc handipenk tox
irenk el gan ete uzen.

Եվ կամ գործածվում են դրանց «թարգմանված» տարբերակները:
Վերջիններից են առողջանության նշաններից՝ բացականչականը (փոխարենը
սովորաբար գործածվում է «!» կամ պարզապես տառի բազմակիություն,
օրինակ՝ վա j - vay! - վաաայ, ողջո լյն - voxjuyn! - voxjuuuyyn, տեսե լ եմ - tesel
em!!! - teseeeel em, հաճախ՝ և՛ մեկը, և՛ մյուսը՝ teseeeel em!!!, voxjuuuyyn!!,
վաաաայ! և այլն), հարցականը (փոխարենը՝ «?», օրինակ՝ Բ՞նչ ես անում: - Inch
es anum? - Բնչ ես անում???, Ասե՛մ - Asem?- Ասեմ??, Կգա՛ս, թե՛ մենք գնանք -
Kgas, te menq gnanq? և այլն), բացահայտության նշաններից՝ չակերտները
(փոխարենը՝ «», օրինակ՝ Դրա վրա գրված էր «Կարմիր» - Dra vra grvac er

“Karmir”, Կարդացի «Ծաղկե քառյակ»-ը – Կարդացի «Ծաղ- կե քառյակ»-ը – Kardaci “Caxke qaryak”– y, «Տուն» բառով պետք է սկսեր» – «Տուն» բառով պետք է սկսեր – “Tun” barov petq e skser և այլն), տրոհության նշաններից՝ վերջակետը (փոխարենը՝ «.», օրինակ՝ Մենք շուտով մեկնելու ենք: – Մենք շուտով մեկնելու ենք. – Menq shutov meknelu enk., Բոլորին հաջողություն եմ մաղթում: – Բոլորին հաջողություն եմ մաղթում. – Bolorin hajoxutyun em maxtum. և այլն), գոյության դեպքում՝ միջակետը (այսպես՝ «:» կամ «;», օրինակ՝ Պատասխանեցի. «Տու՛ր՝ անձամբ բերի»: – Պատասխանեցի: «Տու՛ր՝ անձամբ բերի», Չեմ գնա. ինքնիրեն ամեն ինչ կհարթվի: – 4em gna; inkiniren amen in4 khartvi. և այլն) և բութը (այսպես՝ «-» կամ «'», օրինակ՝ Մենք՝ անպայման, մյուսները՝ չգիտեմ: – Menq՝ anpajman, mjusner@՝ chgitem. Մեզ թվում էր՝ ամեն ինչ ճիշտ է: – Mez tvum er-amen inch chisht e.): Քիչ տուժող նշանները ստորակետն ու կախման կետերն են, որ արտառոց շեղումներ չունեն: Մյուս կետադրական նշանները պարզապես մոռացված են, օրինակ՝ շեշտը, փակագծերը սովորաբար չեն կիրառվում:

Որոշ խոսքի մասեր, հատկապես շաղկապը, եղանակավորողներն ու ձայնարկությունը հաճախ փոխարինվում են օտար համարժեքով: Հանդիպում է «և», «ու» շաղկապների փոխարեն գործածված օտար «&» նշանը, օրինակ՝ Մենք և նրանք-Menq & nranq, Ես, դու և քույրդ-Es, du & quyrđ, Ու ոչ ոք չկար-& voch vok chkar և այլն, հիացական, զարմացական, բավականության և այս բնույթի ձայնարկությունները հիմնականում գործում են օտար “Wow!” արտահայտության տեսքով, օրինակ.

*Դրանից քիչ մնաց:	* Dranic qich mnac.
**Պա՛հ:	** Woowww!,
# Վա՛խ, գեղեցիկ է:	# Woowww!! Gexetsik e!,
-Կարող ես չորսն էլ քեզ պահել:	- Կարող ես 4ն էլ քեզ պահել:
--Իրո՞ք:	--Woow!!!

և այլն, իսկ օրինակ դժգոհություն, ափսոսանք, վախ և նման զգացումներ, ապրումներ արտահայտող ձայնարկությունները՝ օտար «Oops!» ձևով, օրինակ.

- Մխալ ես հիշում:	- Sxal es hishum.
-Վա՛յ:	-Oops!,
*Ափսո՛ս՝ չտեսա:	*Oops chtesa!

և այլն:

Էլեկտրոնային հաղորդակցման հետևանքով սկսվեց և դեռ շարունակվում է բառային նորաբանությունների հոսք հայերենի բառային կազմ: Մտահոգիչ են, սակայն, օտարաբանությունները՝ այն էլ իմաստային աղավաղումով հանդես եկող: Այսպես, օրինակ, «կայք»-ի

փոխարեն գործածվում է «սայթ» բառը, այն էլ բառիմաստի նեղացումով. «site» նշանակում է համացանցում կազմակերպության էլեկտրոնային փաստաթղթերի ամբողջություն մեկ հասցեի ներքո, բայց մեծ մասամբ գործածվում է կայքի անձնական էջը նկատի ունենալով: Մեկ այլ բառ՝ «ծածկագիր» բառի փոխարեն միշտ տեսնում ենք «փասվորդ» («password») և սրա տարբերակներից «պառոլ» («пароль») բառը՝ «Պիտի փասվորդը փոխես», «Պառոլը սխալ էս հավաքում», «Միշտ մոռանում էս փասվորդը, բոլոր պառոլները մի տեղ գրի»:

Ուղղագրական խնդիր է տողադարձի բացակայությունը: Մա արձանագրություն է այն մասին, որ էլեկտրոնային հաղորդակցման յուրտում պարզապես հնարավոր չէ գտնել գոնե մեկ տողադարձ: Մակայն կա այլ երևույթ. բառը կարող է պարզապես բաժանվել կտորների՝ հատկապես այդպես է հնչյունի բազմակիությամբ արտահայտվող ձայնարկությունների, կոչական բառերի դեպքում, ինչպես՝

Վաաաաաաաաաա
աաաայ, հաջորդը
տեսնենք. Աաաա
աաաաան, մեզ ա
սել են, որ նախօր
ոք տեղում լինենք!
Չգրանցվածները
չեն կարող մտնել.

Գրաբանության գերագույն խնդիր է այն, որ էլեկտրոնային հաղորդակցման դաշտերում մեծ մասամբ բացակայում է հայերենի այբուբենով արտահայտվող տեքստը: Այբուբենը տվյալ քաղաքակրթության յուրօրինակ հայացքն է, «միայն այբբենային մշակույթներն են ճանաչողության բարձունքների հասել»⁵:

Հայերեն տեքստերի հսկայական մասը միայն բովանդակությունից կարելի է ճանաչել, քանի որ գրվում է կա՛մ լատինատառ, կա՛մ ժամանակակից ռուսերենի տառերով: Էլեկտրոնային հաղորդակցման մեջ լայնածակատ գործող տրանսլիտր անգրագիտության պարարտ հոդ է: Այդպես է, որովհետև մեր օրերում նույնիսկ նախադարձական տարիքի անհատը լավ տեղյակ է էլեկտրոնային հաղորդակցմանը, բայց դեռ գաղափար չունի հայերենի քերականության մասին և մտնելով հորձանքի մեջ՝ միանգամից տեսնում է լեզվի աղավաղված պատկերը: Ումանք տրանսլիտր կարող են համարել լեզվական միջոցների տնտեսման եղանակ. հաղորդագրության չափը սահմանափակ է, և պետք է հնարավորինս մեծ ծավալի տեղեկատվություն տեղավորել հնարավորինս քիչ նշաններով⁶: Հայերենի դեպքում խտացրած տեղեկության փոխանցումը երկրորդ խնդիրն է. ի վերջո, կարելի է մի քանի հաղորդագրության միջոցով սպառել ասելիքը: Հայախոսի համար տրանսլիտր

⁵ Նույն տեղում, էջ 45:

⁶ Сидорова М., նշվ. աշխ.:

այլընտրանք է, քանի որ էլեկտրոնային միջոցների հիմնական մասը զուրկ է հայերեն այբուբենից, չհաշված այն, որ դրա տարբերակների առկայության դեպքում խնդիրն ավելի է խորանում. հաղորդագրությունը կարող է փոխանցվել հայերեն մի տեսակի այբուբենով, իսկ ստացողը կտեսնի անվերծանելի նշանների խումբ, քանի որ ինքը չունի համապատասխան գրատեսակ: Տրանսլիտր ոչ միայն վտանգավոր է բարոյահո-գեբանական, ազգային մտածելակերպի, ազգային հպարտության ու արժանիքների տեսանկյուններից, այլ նաև այն իմաստով, որ ուղղակի հարված է պարզազույն փոխըմբռնմանը. տրանսլիտով գրված բազմաթիվ բառեր կարող են լավագույն դեպքում մնալ անհասկանալի: «Լավագույն դեպքում», քանի որ ավելի լավ է ոչինչ չհասկանալ գրված բառից, քան այն հասկանալ բոլորովին այլ իմաստով: Տրանսլիտի հետևանքով ստացվող տրամաբանական համանունները, (օրինակ՝ *char-ճար-չար, gam-գամ-ժամ, ari-արի-ադի, dran-դրան-դրան, gank-ջանք-գանք, bari-բառի-բարի, tvec-տվեց-թվեց, ptum-փթթում-պտտում, taxi-թաղի-տաքսի, text-տեղդ-տեքստ, lur-լուռ-լուր, hox-հոդ-հոգս* և այլն), այլ պատճառներով ի հայտ եկող դիպվածային (օրինակ՝ տառի բացթողում կամ սայթաքում՝ *hamar-hamr, patker@-pater@, karag-karg, mats-mahs* և այլն), մեկ տառի պատճառով հաճախ իմաստայնորեն այդպես էլ անվերծանելի կամ պարզապես ենթադրելի (օրինակ՝ *\at-շատ, ma8dik-մարդիկ, 3w84ank-փորձանք, жор gam-vor gam- որ գամ, ԿԵՐԵՅԻ-yerevi-երևի, каѡѡр -kaxcr-քաղցր*) բառերը, անվիճելի է, լեզվի բառապաշարի մակաբույծ հատվածն են: Կարելի է համակերպվել, որ էլեկտրոնային տեքստերի բառապաշարն ու դրա առանձնահատկությունները առանձին շերտ են լեզվում, բայց միայն այն դեպքում, եթե դրանք ոչ թե լեզվի թերությունների շարքն են լրացնում, այլ հարստացնում են լեզուն:

Ավելորդ է նույնիսկ նշել հայերենի ու ռուսերենի, հայերենի և անգլերենի և այլ լեզուների միջև եղած հնչյունական տարբերությունները: Վերջին ժամանակներս յուրաքանչյուր սոցիալական ցանցում արդեն կա հայատառ գրելու հնարավորություն, և չնայած հաղորդակցման այս դաշտերն օգտագործողները ստիպված են հայերենի որոշ հնչյուններ օտարատառ տեքստում արտահայտելիս դիմել այլ նշանների (օրինակ՝ *ը-y-@- ynker-@nker-ընկեր, դ-gh-x-g-xagh-xax-xag- խաղ, ե-ye-yerbec-երբեք, ճ-ch-j-charpik-jarpik-ճարպիկ, ծ-c-ts-&-caxik-tsaxik-&axik- ծաղիկ, ց-g-j-dj-dz-gur-jur-djur-dzur-ջուր* և այլն), մի տեսակ դժվարանում են «սովոր եմ»-ի ու «սովոր չեմ»-ի սահմանն անտեսել. լեզուների այբբենական նշանները ստեղծաբար վրա չեն համընկնում, և օգտագործողը, որ սովոր չէ հայերեն գրել ստեղծաբարով, ստիպված է անընդհատ սխալներն ուղղելով գրել, այլապես կստացվեն վերծանելու կարիք ունեցող բառեր: Թողնելով այս հարցը կամ նշանակություն չտալով այս փաստին՝ կարող ենք նույնիսկ կորցնել մի բան, որ ավելին է, քան

կրոնը: Էլեկտրոնային հաղորդակցության տարածումով համընդհանուր այբուբենի՝ հարցը ինքնիքեն լուծվելու ճանապարհին է: Ազգային արժեքները պահպանելու ճանապարհների որոնման, լեզվի մաքրության վերաբերյալ սովորաբար անարդյունավետ գրույցներով տարված՝ չենք նկատում, որ արդեն վտանգված է նաև գրավոր լեզուն՝ սկսած այբուբենից: Համացանցը նոր իրականություն է, որտեղ նույնպես պետք է ապացուցել գոյություն ունենալու իրավունքը, և սա ավելի վտանգավոր իրականություն է, քանի որ հիմնականում գուրկ է օրենքներից: Էլեկտրոնային հաղորդակցություն իրականացնող հայերենի վիճակը նման է մինչև հինգերորդ դարը եղած հայերենին. կա լեզու, չունենք գրեր: Ժամանակի մեծ հեռավորությունից ավելի լավ է երևում այն, ինչ կարող էր լինել առանց գրերի: Այսպիսով, տեսնելով հայերենի ներկա վիճակը համացանցում, պատկերացնելով մեր լեզվի առաջընթացն այս ճանապարհով, հարկ ենք համարում լուծում փնտրել: Իհարկե, չենք կարող անխտիր բոլորից պահանջել լեզվի հանդեպ հոգատարության ու դրական մանրախնդրության նույն մակարդակը, մնում է պարզապես արհեստականորեն սահմաններ դնել էլեկտրոնային լեզվին: Այդ սահմանափակումները պետք է մոտավորապես նմանվեն տարբեր լեզուներում որոշ բառերի վրա ժամանակին կիրառված արգելքներին կամ էլ լեզվական իրողությունների փոխանակումներին, քանի որ համացանցից օգտվողների մեծ մասը երբեք ինքնուրույն չի գիտակցի դրա անհրաժեշտությունը: Արգելումը գուցե սկզբում արհեստական լինի, բայց ժամանակի ընթացքում կարմատանա, կդառնա սովորական:

Մեր լեզուն էլեկտրոնային հաղորդակցման դաշտերում ճնշվում է օտար լեզուներից, և կարծես թե հասկանալի է՝ ինչու. համակարգիչը չի ստեղծվել Հայաստանում, համացանցը չի առաջացել Հայաստանում, առաջին չաթն ու սոցիալական կայքերը չեն ստեղծվել Հայաստանում: Բայց խնդիր կա. ժամանակի ընթացքում ստեղծվեցին և՛ հայկական չաթեր, և՛ հայկական սոցիալական կայքեր, մինչդեռ ամենաթողությունը լեզվում այդ տեղերում չի զիջում մյուս՝ ավելի վաղ ի հայտ եկած դաշտերում եղածին:

АРМЯНСКИЙ ТЕКСТ В ЭЛЕКТРОННОЙ КОММУНИКАЦИИ

ОГАННИСЯН С. Г.

Резюме

Одним из великих изобретений нашего времени являются интернет и новейший тип человеческого общения — электронная коммуникация, которые влияют как на человеческое мышление, так и на язык. Данный вид коммуникации оказывает негативное влияние, в частности, на развитие армянского языка. Речь идет о морфологических,

⁷ Տե՛ս Դирингер Д. Алфавит, М., 1963, с. 636-637.

синтаксических, лексических особенностях электронного армянского языка. Оставляет желать лучшего также орфография электронной коммуникации.

ARMENIAN DISCOURSE IN ELECTRONIC COMMUNICATION

S. HOVHANNISYAN

Abstract

The Internet, one of the greatest human achievements, and electronic communication, the recently-emerged type of communication, affects both human mind and the language. The negative impact of this type of communication is particularly reflected on the development of the Armenian language. The present state of the electronic communication in Armenian leaves much to be desired in terms of phonology, morphology, syntax, semantics, as well as punctuation.